ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԹԻՎ 1 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «28» «նոյեմբերի» 2021թ.

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն՝ ի դեմս գլխավոր քարտուղար Գ. Մկրտչյանի, որը գործում է ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «Գնահատման և փորձաքննությունների ազգային կենտրոն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Սաֆարյանի, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է փորձաքննության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին պահանջների:

1.2 Կատարողը Ծառայությունը մատուցում է Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան՝ սույն պայմանագրով նախատեսված ծավալներով, ձևով և Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող կամ անպատշաճ որակի Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պայմանագիրը խախտելու հետևանքով պայմանագրի գործողության ընթացքում, ինչպես նաև լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով ձեռք է բերել Ծառայություն՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ծառայությունն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 Կատարողին տրամադրել Եզրակացության իրականացման համար անհրաժեշտ և հավաստի ելակետային տվյալներ (տեղեկություններ,փաստաթղթեր,նյութեր,հետազոտման ենթակա օբյեկտ և այլն):

2.2.4 Կատարողի միջնորդության դեպքում 30 օրվա ընթացքում նրան տրամադրել Եզրակացության (Գնահատման) կատարման համար անհրաժեշտ լրացուցիչ հավաստի ելակետային տվյալներ (տեղեկություններ, փաստաթղթեր, նյութեր, հետազոտման ենթակա օբյեկտ և այլն):

2.2.5 Վճարել փորձաքննության կատարման գինը, սահմանված գինը ըստ սույն պայմանգրում նախատեսված սահմանված չափով և կարգով:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Պահանջել փորձաքննության կատարման համար անհրաժեշտ հավաստի ելակետային տվյալների (տեղեկություններ, փաստաթղթեր, նյութեր, հետազոտման ենթակա օբյեկտ և այլն) տրամադրումը

2.3.3 Փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ եկած նոր հանգամանքների հետևանքով Պատվիրատուի համաձայնությամբ երկարացնել փորձաքննության իրականացման ժամկետը, կազմելով համաձայնագիր, որը կհանդիսանա սույն պայմանգրի անբաժանելի մասը:

2.3.4 Հրաժարվել եզրակցություն (Գնահատման հաշվետվության) տրամադրելուց և լուծել պայմանգիրը 2 միջնորդության պահանջները չբավարարելու դեպքում:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

3.2 Համապատասխան ստորաբաժանման ղեկավարը արձանագրությունը ստորագրում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին արձանագրությունը ստորագրվում է նաև Կատարողի կողմից: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, Արձանագրությունը չի ստորագրվում և այդ մասին անհապաղ տեղյակ է պահվում Պատվիրատուն, ով՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Եթե պայմանագրի 3.1 կետում սահմանված ժամկետի ավարտից հետո համապատասխան ստորաբաժանման ղեկավարը չի կազմում սույն կետի պահանջներին համապատասխան Արձանագրությունը, չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա ծառայությունը համարվում է ընդունված և 3.1 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը համապատասխան ստորաբաժանման ղեկավարը Արձանագրությունը Կատարողին է տրամադրում՝ Պատվիրատուին ներկայացնելու համար:

3.4 Հիմք ընդունելով սույն պայմանագրի 7.2 կետը, Կատարողը Արձանագրությամբ Պատվիրատուին է ներկայացնում մինչև սույն պայմանագիրը կնքելը՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության և Կատարողի միջև կնքված 2021 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 1 պայմանագրով սահմանված ժամանակահատվածում կատարված աշխատանքները:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 765000 (յոթ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.1.2. Եթե փաստացի մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը պակաս է Պատվիրատուի կողմից որոշված Ստացողին՝ առանձին տողով ունեցած բյուջետային հատկացումից, ապա Պատվիրատուն վճարում է միայն փաստացի մատուցված ծառայությանը համարժեք չափով, իսկ եթե փաստացի մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը ավել է Պատվիրատուի կողմից որոշված Ստացողին՝ առանձին տողով ունեցած բյուջետային հատկացումից, ապա այդ մասով վճարման

ենթակա գումարի չափի վերաբերյալ հարցը կարգավորվում է Կողմերի միջև կնքվող համաձայնագրով, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Պատվիրատուի կողմից որոշված Ստացողի և Կատարողի հաստատած Արձանագրության հիման վրա (եթե Արձանագրությունը Պատվիրատուն ստանում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից: Պայմանագիրը գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 15-ը ներառյալ:

7.2 Հիմք ընդունելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 23-րդ մասը, Կողմերը սույն պայմանագրի մաս են համարում նաև ՀՀ հատուկ քննչական ծառայության և Կատարողի միջև կնքված 2021 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 1 պայմանագրի պայմանները:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 հավելվածը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե	**«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ**
ք. Երևան, Վ. Վաղարշյան 13ա	**ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Դ. Անհաղթ 23շ**
ՀՎՀՀ 00243582	**ՀՎՀՀ 01023304**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**«ԱԿԲԱ ԲԱՆԿ»ԲԲԸ**
Հ/Հ 900011038701	**h/h 220290127087000**
Գլխավոր քարտուղար	**Տնօրեն՝ Վ. Սաֆարյան**
Գ. Մկրտչյան	
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
L.S.	L.S.

Հավելված 1
«28» նոյեմբերի 2021թ. կնքված
Թիվ 1 պայմանագրի

Գնացուցակ
Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին

Չափա բաժնի համար	Չափաբաժնի /ծառայության/ անվանում և բնութագիր	Հետազոտվող օբյեկտների քանակը	Ծառայությունների գինը ՀՀ դրամ
1	*Ապրանքագիտական փորձաքննություն*	*1 (բնակարան)*	*30.000*
2	*Ապրանքագիտական փորձաքննություն*	*1 (հողամաս մինչև 5000,0 քմ)*	*100.000*
3.	*Ապրանքագիտական փորձաքննություն*	*1 (հողամաս 5000,0 քմ ավել)*	*150.000*
4	*Ապրանքագիտական փորձաքննություն*	*Բնակելի փուն, օժ.շինություններ և հողամաս*	*480.000*

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե
ք. Երևան, Վ. Վաղարշյան 13ա
ՀՎՀՀ 00243582
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011038701
Գլխավոր քարտուղար
Գ. Մկրտչյան

(ստորագրություն) Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ
ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն,
Դ. Անհաղթ 23շ
ՀՎՀՀ 01023304
«ԱԿԲԱ ԲԱՆԿ»ԲԲԸ
հ/հ 220290127087000
Տնօրեն՝ Վ. Սաֆարյան

(ստորագրություն)
Կ.Տ.